

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ըստ նկարի՝ հյուսիսային կիսագնդում տարվա ո՞ր եղանակն է համապատասխանում 2-րդ պատկերին.

- 1) աշունը
- 2) ձմեռը
- 3) գարունը
- 4) ամառը



2

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 1 000 000 է, նշանակում է, որ իրական չափերը փոքրացված են.

- 1) հարյուր հազար անգամ
- 2) մեկ միլիոն անգամ
- 3) հարյուր անգամ
- 4) հազար անգամ

3

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 18 սմ է, իսկ իրականում՝ 720 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 7 200 000
- 2) 1 : 3 600 000
- 3) 1 : 800 000
- 4) 1 : 4 000 000

4

Օրական ռիթմ չէ.

- 1) ամպամածությունը
- 2) բրիզների առաջացումը
- 3) լուսասիները
- 4) ջերմաստիճանի օրական ընթացքը

5

Օդի ամենացածր ջերմաստիճանն անամպ օրերին լինում է.

- 1) երեկոյան
- 2) կեսգիշերին
- 3) վաղ առավոտյան
- 4) կեսօրին

6

Կլիմաստեղծ գործոն չէ.

- 1) լանջերի դիրքադրությունը
- 2) գերիշխող քամիները
- 3) տեղի բարձրությունը
- 4) ամպամածությունը

7

Հյուսիսային լայնության 66,5° գուգահեռականի վրա բնեռային գիշեր լինում է.

- 1) աշնանային գիշերահավասարի օրը
- 2) ձմեռային արևակայության օրը
- 3) գարնանային գիշերահավասարի օրը
- 4) ամառային արևակայության օրը

8


Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանի չափումներից ստացել են $-3,8^\circ$, $+5,4^\circ$, $+12,1^\circ$, $+18^\circ$, $+24,3^\circ$, $+14,1^\circ$, $+6,6^\circ$, $-0,8^\circ$ ցուցանիշները: Ջերմաստիճանի տատանման օրական լայնությունը կլինի.

- 1) $11,2^\circ$
- 2) $7,2^\circ$
- 3) $28,1^\circ$
- 4) 10°

9

Քարտեզում ո՞ր թվով է նշված բարեխառն կլիմայական գոտին.


- 1) 4
- 2) 5
- 3) 2
- 4) 3



10

Ի՞նչ է պատկերված նկարում.

- 1) անտիցիկլոն հարավային կիսագնդում
- 2) անտիցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 3) ցիկլոն հարավային կիսագնդում
- 4) ցիկլոն հյուսիսային կիսագնդում



11

«Օով – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Բալթիկ – Իռլանդիա
- 2) Միջերկրական – Կրետե
- 3) Դեղին – Թայվան
- 4) Սարգասյան – Նյուֆաունդլենդ

12

Տափաստանում ծառային բուսականությունը բացակայում է, քանի որ.

- 1) հողերը բավականաչափ բերրի չեն
- 2) խոնավության քանակն անբավարար է
- 3) ամռանը ջերմության քանակն անբավարար է
- 4) ձմռանը լինում են սաստիկ ցրտեր

13

Բնութագրումով որոշել կլիմայական գոտին.

Կլիմայական այդ գոտում տարվա ընթացքում երկու սեզոն է լավ արտահայտված՝ տաք ու խոնավ ամառ և տաք ու չոր ձմեռ: Ո՞ր կլիմայական գոտին է.

- 1) արևադարձային
- 2) բարեխառն
- 3) մերձարևադարձային
- 4) մերձհասարակածային

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիայի արևելյան շրջանները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալում են:
- 2) Եվրասիան միակ մայրցամաքն է, որի հիմքում մի քանի պլատֆորմ է ընկած:
- 3) Արաբական և Հնդկական պլատֆորմները Գոնդվանայի մասերն են եղել:
- 4) Արևելաեվրոպական (Ռուսական) պլատֆորմը երիտասարդ է:

15

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բևեռային շրջագծերից դեպի բևեռ շարժվելիս բևեռային գիշերվա տևողությունը նվազում է:
- 2) Երկրագնդի առանցքի թեքությունը ուղեծրի հարթության նկատմամբ անփոփոխ է:
- 3) Երկրագնդի վրա մարտի 21-ին ցերեկվա և գիշերվա տևողությունը հավասար են:
- 4) Բևեռների աշխարհագրական դիրքը որոշելու համար բավական է իմանալ միայն մեկ կոորդինատը:

16

«Հարթավայր – դրա տարածքով հոսող գետ» գույգերից ո՞րն է ճիշտը.

- 1) Մերձմեքսիկական դաշտավայր – Միսիսիպի
- 2) Կենտրոնական հարթավայր – Յուկոն
- 3) Մեծ հարթավայրեր – Սուրբ Լավրենտիոս
- 4) Մերձատլանտյան դաշտավայր – Մակենզի

17

«Գետ – ծոց» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ինդոս – Պարսից
- 2) Զամբեզի – Գվինեական
- 3) Միսիսիպի – Հուդզոնի
- 4) Գանգես – Բենգալական

18

«Գետ – վտակներ» գույգերից ո՞րն է ճիշտ.

- 1) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս
- 2) Վոլգա – Կամա, Ուրալ
- 3) Կուր – Արաքս, Ճորոխ
- 4) Գանգես – Ինդոս, Իրավադի

19

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Եթե հակումն արևելյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

- 1) մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը
- 2) մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով
- 3) մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը
- 4) մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակումի վրա

20

Քաղաքն արևելյան երկայնության 45⁰-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 4-րդ
- 2) 3-րդ
- 3) 2-րդ
- 4) 1-ին

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անտիցիկլոնը մթնոլորտային բարձր ճնշման մարզ է:
- 2) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 3) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է 670 մմ սնդիկի սյան:
- 4) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան ծովափնյա շրջանների կլիման ցամաքային է:
- 2) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կորդիլիերների լեռնային համակարգը:
- 3) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի խոշոր լճերն ունեն սառցադաշտային ծագում:
- 4) Լաբրադոր թերակղզում տունդրայի գոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:

23


Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Մեծ ավազան սարահարթ, Ուրալյան լեռներ, Վերին լիճ
- 2) Չինական մեծ հարթավայր, Էլբուրսի լեռներ, Վեներն լիճ
- 3) Դեկանի սարահարթ, Էրեբուս հրաբուխ, Լադոգա լիճ
- 4) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ

24

Քարտեզում **Դ** տառով **ո՞ր** կղզին է նշված.

- 1) Սիցիլիա
- 2) Կորսիկա
- 3) Կիպրոս
- 4) Սարդինիա



25

Քարտեզում **Ե** տառով **ո՞ր** պետությունն է նշված.

- 1) Ռումինիա
- 2) Ուկրաինա
- 3) Մոլդովա
- 4) Բուլղարիա

26

Ժողովրդագրական անցման չորրորդ փուլին բնորոշ է բնական աճի կայունացումը: Այս փուլը համընկնում է.

- 1) երկրների զարգացման արդյունաբերական փուլին
- 2) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
- 3) մինչկապիտալիստական ժամանակաշրջանին
- 4) «Ժողովրդագրական պայթյունին»

27

Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) ուրբանիզացիա
- 2) ասիմիլյացիա
- 3) միգրացիա
- 4) ագլոմերացիա

28

Բնութագրումով որոշել երկիրը.

Բնակչության թվաքանակով երկիրն աշխարհում առաջին տասնյակում է: Բազմազգ պետություն է: Բնակչությանը բնորոշ է նեղացված վերարտադրության ռեժիմը: Բնակչության խտությունն արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ղազախստանը
- 2) Ուկրաինան
- 3) Պակիստանը
- 4) Ռուսաստանը

29

Երկրի բնակչության թիվը 16,8 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 6,3 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 62,5 %
- 2) 47,5 %
- 3) 37,5 %
- 4) 72,5 %

30

«Պետություն – խոշորագույն քաղաք» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Թուրքիա – Ստամբուլ
- 2) Բրազիլիա – Բրազիլիա
- 3) Ավստրալիա – Կանբերա
- 4) ԱՄՆ – Վաշինգտոն

31

«Պետություն – պետական կարգ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սաուդյան Արաբիա – հանրապետություն
- 2) Եմեն – միապետություն
- 3) Ադրբեջան – հանրապետություն
- 4) Սիրիա – միապետություն

32

Բնակչության բացարձակ թվի նվազումը (ապաբնակեցումը) առավելապես բնորոշ է.

- 1) Ռուսաստանին և Ուկրաինային
- 2) Թուրքմենստանին և Ուզբեկստանին
- 3) Ղազախստանին և Իրանին
- 4) Ավստրալիային և Ճապոնիային

33

Տրված ցուցանիշներից ԱՖրիկայի երկրները մնացած մայրցամաքների երկրներին գերազանցում են.

- 1) բնակչության բնական աճով
- 2) ազլումերացիաների քանակով
- 3) ուրբանիզացման մակարդակով
- 4) բնակչության միջին խտությամբ

34

Քիմիական արդյունաբերությանը բնորոշ չէ.

- 1) կոմբինացման մեծ հնարավորությունները
- 2) բնապահպանական տեսակետից անվտանգությունը
- 3) հումքային ընդարձակ բազայի առկայությունը
- 4) նոր նյութերի ստեղծումը, որոնք բնության մեջ չեն հանդիպում

35

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ճապոնիայում, Շվեյցարիայում, Իտալիայում շատ բարձր է արդյունահանող արդյունաբերության բաժինը:
- 2) Մեր օրերում մեծանում է էներգիայի ոչ ավանդական աղբյուրների օգտագործումը:
- 3) Երկրաջերմային էլեկտրակայանները կառուցում են հրաբխային շրջաններում:
- 4) Համաշխարհային տնտեսությունը վերջնականապես ձևավորվել է 19–րդ դարի վերջին և 20–րդ դարի սկզբին:

36

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 2) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:
- 3) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 4) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Համաշխարհային անասնապահության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է:
- 2) Խոզերի համաշխարհային գլխաքանակի զգալի մասը բաժին է ընկնում Հարավարևմտյան Ասիային:
- 3) Ջարգացած երկրների մեծ մասում գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը:
- 4) Ոչխարաբուծությունը հիմնականում տարածված է մերձարևադարձային և արևադարձային չոր տափաստանային և կիսաանապատային շրջաններում:

38

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ավտոմոբիլային տրանսպորտի դերը մեծ է հատկապես կարճ տարածությունների վրա բեռների և ուղևորների փոխադրման գործում:
- 2) Օդային տրանսպորտի դերը մեծ է հատկապես ուղևորների փոխադրման գործում:
- 3) Երկաթուղային տրանսպորտը տրանսպորտի ամենաերիտասարդ ու արագ զարգացող տեսակն է:
- 4) Համաշխարհային տրանսպորտային բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է ծովային տրանսպորտին:

39

Տրված երկրներից ո՞րն է առավել սակավ անտառապատ.

- 1) Չինաստան
- 2) ԱՄՆ
- 3) Ավստրալիա
- 4) Սաուդյան Արաբիա

40

Թուրքիային սահմանակից երկրներ չեն.

- 1) Բուլղարիան և Իրաքը
- 2) Քուվեյթը և Հորդանանը
- 3) Իրանը և Ադրբեջանը
- 4) Սիրիան և Վրաստանը

41

Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հյուսիսում տարածվում է Պադանի դաշտավայրը:
- 2) Կլիման մերձարևադարձային միջերկրածովային է:
- 3) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:
- 4) Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը:

42 **Բնութագրումով որոշել պետությունը.**

Բնակչության թվով գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.

- 1) Իրան
- 2) Բրազիլիա
- 3) Կանադա
- 4) Ավստրալիա

43 **Ո՞ր շարքի լեռնագագաթներն են դասավորված բարձրությունների աճման կարգով.**

- 1) Քաջքար, Առնոս, Նեմրուծ
- 2) Միս, Ջիլո, Միփան
- 3) Թոնդրակ, Մարութա, Սրմանց
- 4) Սավալան, Սրմանց, Մուկավետ

44 **«Գետ – վտակ» զույգերից ընտրել սխալը.**

- 1) Արաքս – Ախուրյան
- 2) Արևմտյան Եփրատ – Կուր
- 3) Կուր – Թարթառ
- 4) Ճորոխ – Օլթի

45 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:
- 2) Խարբերդի դաշտի մեծ մասը զբաղեցնում է Քեբանի խոշոր ջրամբարը:
- 3) Արաքս գետի հովտում ամենաբարձրադիրը Միջինարաքսյան գոգավորությունն է:
- 4) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ գետերը միախառնվում են Խարբերդի դաշտում:

46 ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում գործում է 20-ից ավելի ջրային էլեկտրակայան:
- 2) Էլեկտրաէներգիա արտահանող երկիր է:
- 3) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 4) Ամենահզոր ջերմային էլեկտրակայանը Երևանինն է:

47 ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.

- 1) սև մետաղաձուլության թափոնների առկայությունը
- 2) հանքային քիմիական հումքի խոշոր պաշարների առկայությունը
- 3) ատոմային էլեկտրակայանի կառուցումը
- 4) արդյունաբերության բնապահպանական ուղղվածությունը

48 Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.

- 1) կիսաանապատային
- 2) անտառային
- 3) տափաստանային
- 4) չոր տափաստանային

49 Ջրագրական ո՞ր միավորը Արմավիրի մարզի հետ կապ չունի.

- 1) Քասաղ գետ
- 2) Հրազդան գետ
- 3) Այդր լիճ
- 4) Մեծամոր գետ

50 Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մարզի՝ Երևանից ամենահեռու քաղաքը Ալավերդին է:
- 2) Բոլոր քաղաքները երկաթուղային կայարաններ են:
- 3) Բնակչության բնական աճի ցուցանիշն ամենացածրն է ՀՀ-ում:
- 4) Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է հանրապետությունում:

51 Քարտեզում Դեբեդ գետը n ը տառով է նշված.

- 1) Բ
- 2) Գ
- 3) Ա
- 4) Դ



52 Քարտեզում Սպիտակ քաղաքը n ը տառով է նշված.

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

53 «Օգտակար հանածո – հանքավայր» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) երկաթ – Մեքսիկական ծոց
- 2) գունավոր մետաղներ – Կորդիլիերներ
- 3) քարածուխ – Ապալաչներ
- 4) նավթ – Կալիֆոռնիա

54

Քուսական ռեսուրսների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված միջոցառում է.

- 1) արվակուլտուրայի զարգացումը
- 2) հողերի վերակուլտիվացումը
- 3) արգելոցների ստեղծումը
- 4) հողաբարելավումը

55

Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են.

- 1) պեստիցիդներ
- 2) կոնսումենտներ
- 3) պրոդուցենտներ
- 4) ռեդուցենտներ

56

Գրել Որոտան գետի վրա կառուցված ջրեկների համարները.

- | | |
|----------------|-------------|
| 1) Սպանդարյանի | 5) Հրագդանի |
| 2) Ողջիի | 6) Տաթևի |
| 3) Արգելի | 7) Ձորագետի |
| 4) Արգնիի | 8) Շամբի |

57

Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերիտոնոր են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Գերմանիա | 5) Թուրքիա |
| 2) Ուկրաինա | 6) Պակիստան |
| 3) Ճապոնիա | 7) Կանադա |
| 4) Բրազիլիա | 8) Նիգերիա |

58

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հարավային Ամերիկայում.

- | | |
|-------------|-------------|
| 1) գորշ արջ | 5) կոնդոր |
| 2) եքիդնա | 6) պիրանյա |
| 3) մրջնակեր | 7) գրահակիր |
| 4) շիմպանզե | 8) պանդա |

59

Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.

- | | |
|---------------|------------|
| 1) Արարատ | 5) Արթիկ |
| 2) Վաղարշապատ | 6) Գորիս |
| 3) Արտաշատ | 7) Գյումրի |
| 4) Երևան | 8) Հրազդան |

60

Գրել Եվրասիայի ավերը ողողող ծովածոցերի համարները.

- | | |
|------------------|---------------|
| 1) Բիսկայան | 5) Ադենի |
| 2) Այասկայի | 6) Գվինեական |
| 3) Կարպենտարիայի | 7) Բենգալական |
| 4) Պարսից | 8) Լա Պլատայի |

61

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել սառցադաշտային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Արաքս | 5) Անգարա |
| 2) Սիրդարյա | 6) Միսիսիպի |
| 3) Ենիսեյ | 7) Ամուր |
| 4) Ամուդարյա | 8) Օբ |

62

Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել դրանց ջրառատության նվազման կարգով.

- 1) Ախուրյան
- 2) Արփա
- 3) Մեծամոր (Մեջուր)

63

Հյուսիսային Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ հյուսիսից հարավ հաջորդականության.

- 1) Լատվիա
- 2) Լիտվա
- 3) Էստոնիա
- 4) Ֆինլանդիա

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. 41°30՛ և արմ. ե. 23°30՛:
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը հունիսի 22-ի կեսօրին:

(65-66) Քաղաքի բնակչության թիվը 36 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝
350 մարդ: Եկամների թիվը 860 մարդ է, մեկնամեկների թիվը՝ 530 մարդ:

65

Որոշել միգրացիայի մնացորդը:

66

Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

(67-68) Նավը հվ. լ. 12° 30' և արլ. ե. 35° - ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

67 Հյուսիսային արևադարձից:

68 Հարավային բևեռային շրջագծից:

69

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990 թ-ին:
- 2) Բնակչության թվաքանակը փոփոխվել է միայն բնակչության բնական շարժի շնորհիվ:
- 3) Սահմանակից Վրաստանի և Թուրքիայի համեմատությամբ ցածր է բնակչության միջին խտությունը:
- 4) Բնակչության խտությունը տեղանքի բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:
- 5) Տարածքի 70 %-ը բարձր է 1500 մ-ից և այդ բարձրություններում է բնակվում հանրապետության բնակչության կեսից ավելին:
- 6) Արարատյան դաշտի առանձին տեղամասերում գյուղերը ձուլվել են իրար՝ առաջացնելով համատարած տարաբնակեցում:

70

Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Անամպ օրերին օդի ամենաբարձր ջերմաստիճանը լինում է կեսօրից 2-3 ժամ հետո:
- 2) Ջերմաստիճանի փոփոխությունն օրվա ընթացքում կոչվում է օդի ջերմաստիճանի օրական ընթացք:
- 3) Ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը օրվա ընթացքում չափումներից ստացված ցուցանիշների միջին թվաքանականն է:
- 4) Ներքնոլորտը տաքանում է Երկրի մակերևույթից, և յուրաքանչյուր մեկ կիլոմետր բարձրանալիս ջերմաստիճանը նվազում է 5⁰-6⁰-ով:
- 5) Անամպ օրերին օդի ամենացածր ջերմաստիճանը լինում է կեսգիշերին:
- 6) Տարվա ընթացքում օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է օդի տարեկան միջին ջերմաստիճան: